Ոչ պաշտոնական թարգմանություն

ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմ

Freedom House միջազգային իրավապաշտպան կազմակերպության արձագանքը Հայաստանի մարդու իրավունքների պաշտպանի և հասարակական կազմակերպությունների գործունեության երաշխիքների վերաբերյալ

Հայաստանի իշխանությունները պետք է պաշտպանեն ժողովրդավարական ինստիտուտներին և քաղաքացիական հասարակությանը

Ի պատասխան ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին ֆինանսական երաշխիքներից զրկելու վերաբերյալ ՀՀ կառավարության օրենսդրական առաջարկի, ինչպես նաև Հայաստանում ժողովրդավարական բարեփոխումների հակառակորդների կողմից քաղաքացիական հասարակության կազմակերպությունների նկատմամբ ճնշումների մեծածավալ աճի՝ Freedom House-ը տարածել է հետևյալ հայտարարությունը.

Freedom House-ի Եվրոպայի և Եվրասիայի հարցերով տնօրեն Մարկ Բեհրենդթը նշել է, որ Հայաստանի իշխանությունները պետք է ապահովեն երկրում ժողովրդավարական և մարդու իրավունքների ինստիտուտների, այդ թվում՝ քաղաքացիական հասարակության անխոչընդոտ գործունեությունը: Ի լրումն ժողովրդավարական բարեփոխումների հակառակորդների կողմից մեկնարկած՝ քաղաքացիական հասարակությանն ամբողջությամբ արատավորելուն ուղղված ապատեղեկատվական արշավի, Կառավարությունը փորձում է կրճատել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի ֆինանսական անկախությունը: Այս մտահոգիչ զարգացումները միայն խորացնելու են Հայաստանի քաղաքական ճգնաժամը:

Լեռնային Ղարաբաղի հակամարտության և ներկայում առկա քաղաքական ճգնաժամի լույսի ներքո առավել քան երբևէ կարևոր է պահպանել ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմի և քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ հակամարտության ընթացքում տեղի ունեցած մարդու իրավունքների խախտումների, ինչպես նաև երկրում հիմնարար ազատությունների սահմանափակումների վերաբերյալ իրազեկելու կարողությունը:

Հայաստանի իշխանությունները պետք է աջակցեն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին և քաղաքացիական հասարակության կազմակերպություններին՝ նրանց հետ ակտիվ երկխոսություն պահպանելով, ապահովելով

օրենքի գերակայությունը և պատասխանատվության ենթարկելով բռնություն և ատելության խոսք տարածողներին:

Փետրվարի 26-ին ՀՀ իշխանությունները նախաձեռնել են ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի աշխատակազմին պետական ավտոմեքենաներից զրկելու գործընթաց: Մարտի 11-ին տեղի ունեցած Կառավարության նիստի ընթացքում ՀՀ ֆինանսների նախարարությունը ներկայացրել է «Մարդու իրավունքների պաշտպանի մասին» ՀՀ սահմանադրական օրենքի 8-րդ հոդվածի 5-րդ մասն ուժը կորցրած ճանաչելու մասին օրենքի նախագիծ: Այս նոր օրենքի նախագծի ընդունման դեպքում ավելի կսահմանափակի ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի անկախությունը, ինչպես նաև խոչընդոտներ կստեղծվեն ՀՀ մարդու իրավունքների պաշտպանի՝ Հայաստանում մարդու իրավունքների պաշտպանության մանդատն իրականացնելու հարցում: